Հայտարարություն

Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Մեծավանի թիվ 2 միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի երկու դասվարի (16 և 20 դասաժամ), Զինղեկի (1 դրույք), հայոց լեզվի եվ գրականության (18 դասաժամ), մաթեմատիկայի (15 դասաժամ), տղաների տեխնոլոգիայի (4 դասաժամ), աղջիկների տեխնոլոգիայի (4 դասաժամ) գերմաներենի (6 դասաժամ), կերպարվեստի (3 դասաժամ), երգ և երաժշտության (1 դասաժամ),ռուսաց լեզվի (4 դասաժամ), ֆիզիկայի (14 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 14-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջն. դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Մեծավան, Չարենցի 27:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 42-33-66 հեռախոսահամարով: